ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2014 թվականի N 77– Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2011 թվականի հունվարի 21-ի թիվ 01/183-11 գրության համաձայն, Գյումրի համայնքի ավագանին իր 2011 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետությանը հողամասեր նվիրելու մասին» N 122-Ա որոշմամբ հաստատել է պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի զբաղեցրած, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար հատկացված հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ցանկը: Սակայն, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի՝ Գյումրի համայնքի վերը նշված որոշմամբ հաստատված հավելվածում սխալմամբ ընդգրկվել է նաև Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույք (Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան (Հաղթանակի պողոտա N 47), թիվ 1 դպրոց (Աճեմյան փողոց N 40), որը չի համապատասխանում Գյումրի համայնքի ավագանու որոշման պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Գյումրի համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետությանը հողամասեր նվիրելու մասին» N 122-Ա որոշման 1-ին հավելվածի ցանկից հանել

1) № 10 թանգարանի շենք -Շիրակի մարզ, Գյումրի համայնք Հաղթանակի պող. №47,
2) № 16 թիվ 1 կրթահամալիր - Շիրակի մարզ, Գյումրի համայնք Աճեմյան փող. № 40:

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» հունիսի 2014 թ.